

**Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 44/2001 (ԵՀ) կանոնակարգ**

**Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և վճիռների  
ճանաչման ու կատարման մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը, և,  
մասնավորապես, դրա հոդվածներ 61«գ»-ն և 67«1»-ը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը<sup>1</sup>,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը<sup>2</sup>,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի  
եզրակացությունը<sup>3</sup>,

Քանի որ.

1) Համայնքը նպատակ է հետապնդում պահպանել և զարգացնել ազատության,  
ապահովության և արդարադատության տարածք, որտեղ երաշխավորված է անձանց  
ազատ տեղաշարժը: Աստիճանաբար նման տարածք ստեղծելու համար Համայնքը  
պետք է, մասնավորապես, ընդունի քաղաքացիական գործերով դատական  
համագործակցությանն առնչվող ակտեր, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ներքին  
շուկան պատշաճ գործի,

2) ներքին շուկայի պատշաճ գործունեությանը խոչընդոտում են իրավասության և  
վճիռների ճանաչման մասին ներպետական նորմերի միջև առկա որոշ  
տարբերություններ: Էական նշանակություն ունեն քաղաքացիական և առևտրային  
գործերով իրավասության բախումների մասին կանոնները միասնականացնող և  
ձևական պահանջները պարզեցնող դրույթները, որոնց նպատակը սույն  
Կանոնակարգով պարտավորություններ ստանձնած անդամ պետությունների  
վճիռների ճանաչումը և կատարումն ավելի արագ ու պարզ դարձնելն է,

3) Համաձայնագրի 65-րդ հոդվածի իմաստով՝ այս ոլորտը վերաբերում է  
քաղաքացիական գործերով դատական համագործակցությանը,

4) Համաձայնագրի 5-րդ հոդվածով ամրագրված լրացուցչության (subsidiarity) և  
համաչափության սկզբունքների համաձայն՝ սույն Կանոնակարգի նպատակները  
չեն կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից: Ուստի,  
դրանք ավելի արդյունավետ կարող են իրագործվել Համայնքի կողմից: Սույն  
Կանոնակարգը նախատեսում է միայն այն նվազագույնը, որն անհրաժեշտ է նշված  
նպատակներին հասնելու համար, և ոչ ավելին,

<sup>1</sup> ՊՏ C 376, 28.12.1999 թ., էջ 1:

<sup>2</sup> 2000 թվականի սեպտեմբերի 21-ի եզրակացություն (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

<sup>3</sup> ՊՏ C 117, 26.04.2000 թ., էջ 6:

- 5) 1968 թվականի սեպտեմբերի 27-ին անդամ պետությունները Համաձայնագրի 293-րդ հոդվածի չորրորդ պարբերության հիման վրա կնքեցին «Քաղաքացիական և քրեական գործերով իրավասության ու վճիռների կատարման մասին» Բրյուսելի կոնվենցիան, որում հետագայում փոփոխություններ կատարվեցին այդ կոնվենցիային «Նորանդամ պետությունների միանալու մասին» կոնվենցիաներով (այսուհետ՝ «Բրյուսելի կոնվենցիա»)<sup>4</sup>: 1988 թվականի սեպտեմբերի 16-ին անդամ պետությունները և Եվրոպական ազատ առևտրի համաձայնագրի (ԵԱԱՀ) պետությունները կնքեցին «Քաղաքացիական և քրեական գործերով իրավասության ու վճիռների կատարման մասին» Լուզանոյի կոնվենցիան, որը գործում է 1968 թվականի Բրյուսելի կոնվենցիային զուգահեռ: Որոշակի աշխատանք է տարվել նշված Կոնվենցիաների վերանայման ուղղությամբ, և Խորհուրդը հաստատել է վերանայված տեքստերի բովանդակությունը: Անհրաժեշտ է ապահովել այդ վերանայման ընթացքում ձեռք բերված արդյունքների շարունակականությունը,
- 6) քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների ազատ տեղաշարժի նպատակով անհրաժեշտ և նպատակահարմար է, որպեսզի իրավասությունը և վճիռների կատարումը կարգավորող կանոնների վրա տարածվի Համայնքի ընդունած պարտադիր և անմիջականորեն գործող իրավական փաստաթուղթ,
- 7) սույն Կանոնակարգի գործողությունը տարածվում է քաղաքացիական և առևտրային բոլոր հիմնական գործերի վրա՝ բացառությամբ հստակ սահմանված որոշ գործերի,
- 8) որոշակի կապ պետք է լինի սույն Կանոնակարգով կարգավորվող վարույթների և սույն Կանոնակարգով պարտավորություններ ստանձնած անդամ պետությունների տարածքի միջև: Համապատասխանաբար, իրավասության վերաբերյալ ընդհանուր նորմերը, ըստ էության, կիրառելի են, երբ պատասխանողի գտնվելու (բնակության) վայրը (domicile) այդ անդամ պետություններից որևէ մեկում է,
- 9) պատասխանողի նկատմամբ, որի գտնվելու (բնակության) վայրը որևէ անդամ պետությունում չէ, ընդհանուր առմամբ, կիրառվում են գործը քննող դատարանի անդամ պետության իրավասության մասին ներպետական նորմերը, իսկ պատասխանողի նկատմամբ, որի գտնվելու (բնակության) վայրը սույն Կանոնակարգով պարտավորություններ չստանձնած անդամ պետությունում է, շարունակում է կիրառվել Բրյուսելի կոնվենցիան,
- 10) վճիռների ազատ տեղաշարժի նպատակով, սույն Կանոնակարգով պարտավորություն ստանձնած անդամ պետությունում կայացված վճիռները պետք է ճանաչվեն և կատարվեն սույն Կանոնակարգով պարտավորություններ ստանձնած մեկ այլ անդամ պետությունում, նույնիսկ, եթե դատարանի վճռով պարտապան ճանաչված անձի գտնվելու (բնակության) վայրը որևէ երրորդ պետությունում է,
- 11) իրավասության մասին նորմերը պետք է խիստ կանխատեսելի լինեն և հիմնվեն այն սկզբունքի վրա, որ իրավասությունն ընդհանուր առմամբ որոշվում է պատասխանողի գտնվելու (բնակության) վայրի հիման վրա, և, որ այդ հիմքով իրավասությունը միշտ պետք է հասու լինի՝ բացի հստակ սահմանված մի քանի դեպքերից, երբ վեճի առարկան կամ կողմերի ինքնավարությունը թույլ է տալիս

<sup>4</sup> ՊՏ L 299, 31.12.1972 թ., էջ 32:

ՊՏ L 304, 30.10.1978 թ., էջ 1:

ՊՏ L 388, 31.12.1982 թ., էջ 1:

ՊՏ L 285, 3.10.1989 թ., էջ 1:

ՊՏ C 15, 15.1.1997 թ., էջ 1:

Համահավաք տարբերակի համար տե՛ս՝ ՊՏ C 27, 26.01.1998 թ., էջ 1:

իրավասությունը պայմանավորել կապող այլ գործոնով: Իրավաբանական անձի գտնվելու վայրը սահմանվում է ինքնավար կերպով՝ ընդհանուր կանոններն ավելի թափանցիկ դարձնելու և իրավասությունների բախումից խուսափելու համար,

12) բացի պատասխանողի գտնվելու (բնակության) վայրից՝ պետք է լինեն դատարանի և հայցի միջև սերտ կապից կամ արդարադատության արդյունավետ իրականացման անհրաժեշտությունից բխող իրավասության այլընտրանքային հիմքեր,

13) ապահովագրության, սպառողական պայմանագրերի և աշխատանքային հարաբերությունների դեպքում առավել թույլ կողմը պետք է պաշտպանված լինի իրավասության մասին իր համար առավել նպաստավոր նորմերով, քան իրավասության մասին ընդհանուր նորմերն են,

14) պայմանագրի կողմերի ինքնավարությունը պետք է հարզվի սույն Կանոնակարգով նախատեսված իրավասության բացառիկ հիմքերի պահպանմամբ՝ բացի ապահովագրական, սպառողական կամ աշխատանքային պայմանագրերից, որոնց դեպքում իրավասու դատարան ընտրելու ազատությունը սահմանափակ է,

15) ելնելով արդարադատության ներդաշնակ իրականացման շահերից՝ անհրաժեշտ է նվազագույնի հասցնել զուգահեռ վարույթների հավանականությունը և բացառել երկու անդամ պետություններում իրարամերժ վճիռների կայացումը: Պետք է հստակ և արդյունավետ մեխանիզմ մշակել՝ լուծելու վարույթում գտնվող և միմյանց հետ կապված հայցերի հարցը և կանխելու գործի՝ վարույթում գտնվելու ժամանակահատվածի սահմանման հարցում ներպետական տարբերություններից բխող խնդիրները: Սույն Կանոնակարգի իմաստով տվյալ ժամանակահատվածը սահմանվում է ինքնավար կերպով,

16) Համայնքում արդարադատության իրականացման նկատմամբ փոխադարձ վստահությունը հնարավորություն է ընձեռում, որպեսզի որևէ անդամ պետությունում կայացված վճիռն ինքնաբերաբար ճանաչվի մեկ այլ անդամ պետությունում՝ առանց որևէ ընթացակարգի՝ բացառությամբ վեճի առկայության դեպքում,

17) փոխադարձ վստահության միևնույն սկզբունքից ելնելով՝ որևէ անդամ պետությունում կայացված վճիռը մեկ այլ անդամ պետությունում կատարման ենթակա լինելու մասին որոշումները պետք է կայացվեն արագ և արդյունավետ ընթացակարգով: Այդ առումով՝ վճռի՝ կատարման ենթակա լինելու մասին որոշումը պետք է կայացվի գրեթե ինքնաբերաբար, ներկայացված փաստաթղթերի զուտ ձևական ստուգումներից հետո՝ որևէ հնարավորություն չընձեռելով դատարանին իր նախաձեռնությամբ քննարկելու վճռի՝ կատարման ենթակա չլինելու վերաբերյալ սույն Կանոնակարգով նախատեսված հիմքերը,

18) այնուամենայնիվ, պաշտպանության իրավունքի նկատմամբ հարգանքից ելնելով՝ պատասխանողը պետք է իրավունք ունենա մրցակցային ընթացակարգով բողոքարկելու վճռի՝ կատարման ենթակա լինելու մասին որոշումը, եթե կարծում է, որ դրա համար առկա է համապատասխան որևէ հիմք: Հայցվորին ևս պետք է հնարավորություն տրվի օգտվելու բողոքարկման ընթացակարգերից, եթե վճռի՝ կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնելու վերաբերյալ նրա պահանջը մերժվել է,

19) պետք է ապահովել Բրյուսելի կոնվենցիայի և սույն Կանոնակարգի միջև հաջորդականությունը, և այդ նպատակով պետք է սահմանվեն անցումային դրույթներ: Հաջորդականությունն ապահովելու պահանջը վերաբերում է նաև

Եվրոպական համայնքների արդարադատության դատարանի կողմից Բրյուսելի կոնվենցիայի մեկնաբանմանը, և 1971 թվականի<sup>5</sup> արձանագրությունը պետք է շարունակի կիրառվել նաև սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին արդեն իսկ վարույթում գտնվող գործերի նկատմամբ,

20) համաձայն Եվրոպական միության մասին և Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրերին կից «Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դիրքորոշման մասին» արձանագրության 3-րդ հոդվածի՝ Միացյալ Թագավորությունը և Իռլանդիան ծանուցել են սույն Կանոնակարգի ընդունմանն ու կիրառմանը մասնակցելու իրենց ցանկության մասին,

21) համաձայն Եվրոպական միության մասին և Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրերին կից «Դանիայի դիրքորոշման մասին» արձանագրության 1-ին և 2-րդ հոդվածների՝ Դանիան չի մասնակցում սույն Կանոնակարգի ընդունմանը, ուստի պարտավորված չէ դրանով, և այն չի կիրառվում Դանիայի նկատմամբ,

22) հաշվի առնելով, որ Բրյուսելի կոնվենցիան շարունակում է գործել սույն Կանոնակարգով պարտավորություններ ստանձնած անդամ պետությունների և Դանիայի փոխհարաբերությունների նկատմամբ, թե՛ Կոնվենցիան և թե՛ 1971 թվականի արձանագրությունը շարունակում են գործել սույն Կանոնակարգով պարտավորություններ ստանձնած անդամ պետությունների և Դանիայի փոխհարաբերությունների նկատմամբ,

23) Բրյուսելի կոնվենցիան շարունակում է կիրառվել նաև անդամ պետությունների այն տարածքների նկատմամբ, որոնց վրա տարածվում է Կոնվենցիայի գործողությունը և որոնք, Համաձայնագրի 299-րդ հոդվածի համաձայն, ընդգրկված չեն սույն Կանոնակարգում,

24) նույն կերպ, ներդաշնակության նկատառումներով, սույն Կանոնակարգը չպետք է սահմանափակի իրավասության և վճիռների ճանաչման մասին Համայնքի հատուկ փաստաթղթերի գործողությունը,

25) անդամ պետությունների ստանձնած միջազգային պարտավորությունների նկատմամբ հարգանքը ենթադրում է, որ սույն Կանոնակարգը չպետք է սահմանափակի հատուկ հարցեր կարգավորող այն կոնվենցիաների գործողությունը, որոնց մասնակցում են անդամ պետությունները,

26) սույն Կանոնակարգի հիմնադրույթներում պետք է բավարար ճկունություն ապահովվի՝ որոշ անդամ պետությունների ընթացակարգային նորմերի առանձնահատկությունները հաշվի առնելու նպատակով: Բրյուսելի կոնվենցիային կից արձանագրության որոշ դրույթներ, ըստ այդմ, պետք է ներառվեն սույն Կանոնակարգում,

27) Բրյուսելի կոնվենցիային կից արձանագրության հատուկ դրույթներով կարգավորվող որոշ ոլորտներում սահուն անցումն ապահովելու նպատակով՝ սույն Կանոնակարգով անցումային շրջանի համար սահմանվում են որոշ անդամ պետություններում առկա առանձնահատուկ իրավիճակը հաշվի առնող դրույթներ,

---

<sup>5</sup> ՊՏ L 204, 2.08.1975 թ., էջ 28:

ՊՏ L 304, 30.10.1978 թ., էջ 1:

ՊՏ L 388, 31.12.1982 թ., էջ 1:

ՊՏ L 285, 3.10.1989 թ., էջ 1:

ՊՏ C 15, 15.1.1997 թ., էջ 1:

Համահավաք տարբերակի համար տե՛ս՝ ՊՏ C 27, 26.01.1998 թ., էջ 28:

28) սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան հինգ տարի հետո Հանձնաժողովը պետք է զեկույց ներկայացնի սույն Կանոնակարգի կիրառման մասին և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնի առաջարկություններ այն վերանայելու մասին,

29) Հանձնաժողովը պետք է համապատասխան փոփոխություններ կատարի ներպետական իրավասության մասին նորմերի, դատարանների կամ իրավասու մարմինների և բողոքարկման ընթացակարգերի մասին I-IV հավելվածներում՝ որպես հիմք ընդունելով տվյալ անդամ պետության ներկայացրած փոփոխությունների առաջարկը: V-VI հավելվածներում փոփոխությունները պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն, որով սահմանվում է Հանձնաժողովին վերապահված՝ կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը<sup>6</sup>,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

## ԳԼՈՒԽ I

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

#### Հոդված 1

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է քաղաքացիական և առևտրային գործերի նկատմամբ՝ անկախ դատարանի կամ տրիբունալի բնույթից: Սույն Կանոնակարգը չի տարածվում, մասնավորապես, եկամուտների հետ կապված գործերի, մաքսային և վարչական գործերի վրա:

2. Սույն Կանոնակարգը չի կիրառվում հետևյալի նկատմամբ՝

ա) ֆիզիկական անձանց կարգավիճակի կամ գործունակության, ինչպես նաև ամուսնական հարաբերություններից, կտակից և իրավահաջորդությունից բխող գույքային իրավունքներ.

բ) սնանկություն, անվճարունակ ընկերությունների կամ այլ իրավաբանական անձանց գործունեության դադարում, դատարանի կողմից կիրառվող՝ վճարունակության վերականգմանն ուղղված միջոցառումներ, պարտատերերի պահանջների բավարարման սառեցում (մորատորիում) և համանման վարույթներ.

գ) սոցիալական ապահովություն.

դ) արբիտրաժ:

3. Սույն Կանոնակարգում «անդամ պետություն» նշանակում է բոլոր անդամ պետությունները՝ բացի Դանիայից:

---

<sup>6</sup> ՊՏ L 184, 17.07.1999 թ., էջ 23:

## **ԳԼՈՒԽ II**

### **ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Բաժին 1**

##### **Ընդհանուր դրույթներ**

##### **Հոդված 2**

1. Սույն Կանոնակարգի դրույթների պահպանմամբ՝ անձի դեմ, որի գտնվելու (բնակության) վայրը որևէ անդամ պետությունում է, հայցերը, անկախ նրա քաղաքացիությունից, հարուցվում են տվյալ անդամ պետության դատարաններ:
2. Իրենց գտնվելու (բնակության) վայրի անդամ պետության քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ կիրառվում են այդ պետության քաղաքացիների նկատմամբ կիրառվող իրավասության մասին նորմերը:

##### **Հոդված 3**

1. Անձի դեմ, որի գտնվելու (բնակության վայրը) անդամ պետությունում է, այլ անդամ պետության դատարան հայց կարելի է հարուցել միայն սույն գլխի 2-7 բաժիններով նախատեսված նորմերի հիման վրա:
2. Մասնավորապես, I հավելվածով նախատեսված ներպետական իրավասության մասին նորմերը չեն կիրառվում այդպիսի անձի նկատմամբ:

##### **Հոդված 4**

1. Եթե պատասխանողի գտնվելու (բնակության) վայրը որևէ անդամ պետությունում չէ, ապա յուրաքանչյուր անդամ պետության դատարանի իրավասությունը սահմանվում է այդ անդամ պետության իրավունքով՝ 22 և 23-րդ հոդվածների դրույթների պահպանմամբ:
2. Ի տարբերություն պատասխանողի, որի գտնվելու (բնակության) վայրը որևէ անդամ պետությունում չէ՝ ցանկացած անձ, որի գտնվելու (բնակության վայրը) անդամ պետությունում է, անկախ իր քաղաքացիությունից, իրավասու է օգտվել այդ պետությունում գործող և մասնավորապես, I հավելվածում նշված իրավասության մասին նորմերից այնպես, ինչպես այդ պետության քաղաքացիները:

#### **Բաժին 2**

##### **Հատուկ իրավասությունը**

##### **Հոդված 5**

Անձի դեմ, որի գտնվելու (բնակության) վայրը որևէ անդամ պետությունում է, մեկ այլ անդամ պետությունում հայց կարող է հարուցվել՝

1. ա) պայմանագրային պարտավորությունների գործերով՝ տվյալ պարտավորության կատարման վայրի դատարաններ.

բ) սույն դրույթի իմաստով, այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, խնդրո առարկա պարտավորության կատարման վայր է համարվում՝

- ապրանքների վաճառքի դեպքում՝ անդամ պետությունում այն վայրը, որտեղ, պայմանագրի համաձայն, առաքվել կամ պետք է առաքվեին ապրանքները.

- ծառայությունների մատուցման դեպքում՝ անդամ պետությունում այն վայրը, որտեղ, պայմանագրի համաձայն, մատուցվել կամ պետք է մատուցվեին ծառայությունները.

գ) եթե «բ» ենթակետը կիրառելի չէ, ապա կիրառվում է «ա» ենթակետը.

2. ալիմենտային պարտավորությունների գործերով՝ ալիմենտ ստացողի բնակության վայրի (domicile or habitual residence) դատարաններ, իսկ անձի կարգավիճակի վերաբերյալ վարույթի հետ կապված երկրորդական հարցի դեպքում՝ այն դատարան, որը, տվյալ պետության իրավունքի համաձայն, իրավասու է քննելու այդ գործը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասությունը որոշվում է բացառապես կողմերից մեկի քաղաքացիության հիման վրա.

3. քաղաքացիական իրավախախտումների, դելիկտների և քվազիդելիկտների գործերով՝ այն վայրում, ուր տեղի է ունեցել կամ կարող է տեղի ունենալ վնասի հատուցման պահանջի հիմք ծառայած՝ վնաս պատճառած պատահարը.

4. պատճառված վնասի հատուցման և անհիմն հարստացման վերաբերյալ այն քաղաքացիական հայցերով, որոնց հիմքը քրեական գործի հարուցման առիթ դարձած գործողությունն է՝ քրեական գործը քննող դատարանում, եթե այդ դատարանը, ներպետական իրավունքի համաձայն, իրավասու է քննելու նաև քաղաքացիական գործեր.

5. մասնաճյուղի, գործակալության կամ գործունեության իրականացման այլ վայրի գործունեությունից ծագող վեճի դեպքում՝ այն վայրի դատարանում, ուր գտնվում է մասնաճյուղը, գործակալությունը կամ գործունեության իրականացման այլ վայրը.

6. օրենքի ուժով կամ գրավոր փաստաթղթով հիմնադրված կամ բանավոր ստեղծված և հետագայում գրավոր հաստատված հավատարմագրային կառավարման հիմնադրի, կառավարչի և շահառուի գործառույթներ իրականացնելու դեպքում՝ հավատարմագրային կառավարման վայրի անդամ պետության դատարաններ.

7. նավաբեկության ժամանակ բեռի փրկման համար պարգև վճարելու վերաբերյալ վեճերի կապակցությամբ՝ այն դատարանում, որի իրավասության ներքո այդ բեռի վրա

ա) արգելանք է դրվել՝ վճարումն ապահովելու համար, կամ

բ) կարող էր արգելանք դրվել, սակայն գրավ կամ ապահովման այլ միջոց է տրամադրվել՝

պայմանով, որ սույն դրույթը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է պնդում այն մասին, որ պատասխանողը շահագրգռվածություն է ունեցել բեռի նկատմամբ կամ նման շահ է ունեցել բեռի փրկման պահին:

## **Հողված 6**

Անձի դեմ, որի գտնվելու (բնակության) վայրը անդամ պետությունում է, հայց կարող է հարուցվել նաև՝

1. պատասխանողներից որևէ մեկի գտնվելու (բնակության) վայրի դատարան, երբ անձը մի քանի պատասխանողներից մեկն է՝ պայմանով, որ հայցերն այնքան կապված են, որ նպատակահարմար է դրանք քննել և լուծել միասին՝ առանձին վարույթների հետևանքով իրարամերժ վճիռները բացառելու նպատակով.
2. սկզբնական վարույթն իրականացնող դատարանում, որպես երաշխիքի կամ երաշխավորության (warranty or guarantee) վերաբերյալ կամ երրորդ անձի ներգրավմամբ ցանկացած այլ վարույթում երրորդ անձ՝ բացառությամբ, երբ սկզբնական վարույթը հարուցվել է՝ միմիայն տվյալ հարցով իրավասու դատարանի իրավասությունից նրան դուրս բերելու նպատակով.
3. սկզբնական հայցի հիմքը հանդիսացող պայմանագրի կամ փաստերի վրա հիմնված հակընդդեմ հայցի դեպքում՝ սկզբնական հայցը քննող դատարանում.
4. պայմանագրային պարտավորությունների գործերով, եթե գործը կարելի է միացնել միևնույն պատասխանողի դեմ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքներին առնչվող որևէ այլ գործի՝ այն անդամ պետության դատարանում, որտեղ գտնվում է տվյալ անշարժ գույքը:

## **Հողված 7**

Երբ սույն Կանոնակարգով որևէ անդամ պետության դատարան իրավասություն ունի նավի շահագործման հետ կապված պատասխանատվության վերաբերյալ գործերի նկատմամբ, ապա այդ կամ տվյալ անդամ պետության ներպետական իրավունքով դրան փոխարինող ցանկացած այլ դատարան իրավասություն ունի նաև նման պատասխանատվության սահմանափակման վերաբերյալ հայցերի նկատմամբ:

## **Բաժին 3**

**Իրավասությունը ապահովագրության հետ կապված գործերի նկատմամբ**

## **Հողված 8**

Սույն բաժնով որոշվում է ապահովագրության հետ կապված գործերի նկատմամբ իրավասությունը՝ չսահմանափակելով 4-րդ հոդվածի և 5-րդ հոդվածի 5-րդ կետի գործողությունը:

## **Հողված 9**

1. Այն ապահովագրողի դեմ, որի գտնվելու վայրը որևէ անդամ պետությունում է, կարող է հայց հարուցվել՝



ա) ապահովագրողի գտնվելու վայրի անդամ պետության դատարան կամ

բ) մեկ այլ անդամ պետությունում, երբ հայցվորը ապահովադիրն է, ապահովագրված անձը կամ շահառուն՝ հայցվորի գտնվելու (բնակության) վայրի դատարաններ.

գ) համատեղ ապահովագրության դեպքում՝ այն անդամ պետության դատարաններ, ուր հայց է հարուցվել գլխավոր ապահովագրողի դեմ:

2. Եթե ապահովագրողի գտնվելու վայրը անդամ պետությունում չէ, սակայն այն որևէ անդամ պետությունում ունի մասնաճյուղ, գործակալություն կամ գործունեության իրականացման այլ վայր, ապա այդ մասնաճյուղի, գործակալության կամ գործունեության իրականացման այլ վայրի գործունեության հետ կապված վեճերի դեպքում համարվում է, որ ապահովագրողի գտնվելու վայրը սովյալ անդամ պետությունում է:

## **Հոդված 10**

Պատասխանատվության կամ անշարժ գույքի ապահովագրության կապակցությամբ ապահովագրողի դեմ հայց կարող է հարուցվել նաև ապահովագրական պատահարի վայրի դատարան: Սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ շարժական և անշարժ գույքն ապահովագրված են միևնույն ապահովագրական վկայագրով (պոլիսով), և դրանք վնասվել են միևնույն պատահարի արդյունքում:

## **Հոդված 11**

1. Պատասխանատվության ապահովագրության դեպքում ապահովագրողը կարող է նաև, եթե դա նախատեսված է տվյալ դատարանի վայրի իրավունքով, ներգրավվել վնաս կրած անձի կողմից ապահովագրված անձի դեմ հարուցված վարույթում:

2. 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածները կիրառվում են այն հայցերի նկատմամբ, որոնք վնաս կրած անձը ներկայացրել է ուղղակիորեն ապահովագրողի դեմ, եթե նման ուղղակի հայցերը թույլատրված են:

3. Եթե նման ուղղակի հայցերը կարգավորող իրավական նորմերը նախատեսում են, որ ապահովադիրը կամ ապահովագրված անձը կարող է վարույթում ներգրավվել որպես կողմ, ապա միևնույն դատարանի իրավասությունը տարածվում է նաև դրանց վրա:

## **Հոդված 12**

1. Չսահմանափակելով հոդված 11«3»-ի գործողությունը՝ ապահովագրողն իրավասու է հայց հարուցել միայն պատասխանողի գտնվելու (բնակության) վայրի անդամ պետության դատարաններ՝ անկախ այն բանից, թե վերջինս ապահովադիրն է, ապահովագրված անձը, թե շահառու:

2. Սույն բաժնի դրույթները չեն սահմանափակում այն դատարան հակընդդեմ հայց հարուցելու իրավունքը, որը սույն բաժնի համաձայն, քննում է սկզբնական հայցը:

### **Հոդված 13**

Սույն բաժնի դրույթներից շեղումը հնարավոր է միայն այնպիսի համաձայնության հիման վրա՝

1. որը կնքվել է վեճը ծագելուց հետո կամ
2. որն ապահովադրին, ապահովագրված անձին, կամ շահառուին թույլ է տալիս հայց հարուցել՝ սույն բաժնով նախատեսված դատարաններից բացի այլ դատարաններ, կամ
3. որը կնքվել է ապահովադրի և ապահովագրողի միջև, որոնց գտնվելու (բնակության) վայրը (domicile or habitual residence) պայմանագրի կնքման պահին միննույն անդամ պետությունում է եղել, և որով իրավասություն է վերապահվում այդ պետության դատարաններին, նույնիսկ եթե վնասի պատճառ դարձած պատահարը տեղի է ունեցել արտերկրում՝ պայմանով, որ այդ համաձայնությունը չի հակասում տվյալ պետության իրավունքին, կամ,
4. որը կնքվել է ապահովադրի հետ, որի գտնվելու (բնակության) վայրը անդամ պետությունում չէ՝ բացառությամբ, երբ ապահովագրությունը պարտադիր է կամ առնչվում է որևէ անդամ պետության տարածքում գտնվող անշարժ գույքին, կամ
5. որը վերաբերում է ապահովագրական պայմանագրի և այնքանով, որքանով այդ պայմանագրով ապահովագրվում է 14-րդ հոդվածում նախատեսված ռիսկերից մեկը:

### **Հոդված 14**

Հոդված 13«5»-ում նշված ռիսկերն են՝

1. ցանկացած կորուստ կամ վնաս՝ պատճառված՝
  - ա) ծովային նավերին, օֆշորային տարածքներում կամ բաց ծովերում տեղակայումներին, կամ օդանավերին՝ կապված առևտրային նպատակներով դրանց շահագործման հետ.
  - բ) տարանցիկ ճանապարհով տեղափոխվող ապրանքներին՝ բացառությամբ ուղեբեռի, երբ տարանցիկ փոխադրումը բաղկացած է կամ ներառում է նշված նավերով կամ օդանավերով փոխադրումը.
2. բացառությամբ ուղևորներին հասցված մարմնական վնասվածքի կամ նրանց ուղեբեռի կորստի կամ վնասվածքի համար պատասխանատվությունից՝ ցանկացած պատասխանատվություն՝
  - ա) որը ծագում է կետ 1«ա»-ում նշված նավերի, տեղակայումների կամ օդանավերի օգտագործումից կամ շահագործումից այնքանով, որքանով վերջիններիս կապակցությամբ այդպիսի օդանավի գրանցման վայրի անդամ պետության իրավունքը չի արգելում նման ռիսկերի ապահովագրության նկատմամբ իրավասության վերաբերյալ համաձայնության կնքումը.
  - բ) տարանցիկ փոխադրմամբ տեղափոխվող ապրանքների կորստի կամ վնասվածքի դեպքում՝ ինչպես նախատեսված է կետ 1«բ»-ով.
3. կետ 1«ա»-ում նշված նավերի, տեղակայումների կամ օդանավերի օգտագործման կամ շահագործման հետ կապված ցանկացած ֆինանսական կորուստ,

մասնավորապես, բեռների փոխադրավարձի կամ չարտերային վարձույթի կորուստը.

4. 1-3-րդ կետերում նշվածների հետ կապված ցանկացած ռիսկ կամ շահ.

5. անկախ 1-4-րդ կետերից՝ բոլոր «լուրջ ռիսկերը», որոնք սահմանված են Խորհրդի թիվ 73/239/ԵՏՀ<sup>7</sup> հրահանգով՝ փոփոխված Խորհրդի թիվ 88/357/ԵՏՀ<sup>8</sup> և 90/618/ԵՏՀ<sup>9</sup> հրահանգներով՝ դրանց հնարավոր հետագա փոփոխություններով:

## **Բաժին 4**

### **Իրավասությունը սպառողական պայմանագրերի նկատմամբ**

#### **Հոդված 15**

1. Երբ սպառողի կողմից կնքված պայմանագրի նպատակը դուրս է անձի առևտրային կամ մասնագիտական գործունեության շրջանակներից, իրավասությունը որոշվում է սույն բաժնի դրույթներով՝ չսահմանափակելով 4-րդ հոդվածի և 5-րդ հոդվածի 5-րդ կետի գործողությունը, եթե՝

ա) դա առևտրային վարկի պայմանագիր է, որը վերաբերում է ապրանքի ապառիկ վաճառքի վարկային պայմաններին, կամ

բ) այն տարածված վճարումներով վարկային պայմանագիր է կամ վարկի ցանկացած այլ տեսակ, որ տրամադրվում է ապրանքի վաճառքը խթանելու նպատակով, կամ

գ) բոլոր մյուս դեպքերում, պայմանագիրը կնքվել է որևէ անձի հետ, ով առևտրային կամ մասնագիտական գործունեություն է իրականացնում սպառողի բնակության վայրի անդամ պետությունում, կամ նրա այդ գործունեությունը որևէ կերպ ուղղված է տվյալ անդամ պետությանը կամ մի քանի անդամ պետությունների, այդ թվում՝ տվյալ անդամ պետությանը, և պայմանագիրն այդ գործունեության շրջանակում է:

2. Այն դեպքում, երբ սպառողը պայմանագիր է կնքում անձի հետ, որի գտնվելու վայրը անդամ պետությունում չէ, սակայն որի մասնաճյուղը, գործակալությունը կամ գործունեության իրականացման այլ վայրը որևէ անդամ պետությունում է, ապա մասնաճյուղի, գործակալության կամ գործունեության իրականացման այլ վայրի գործունեությունից ծագող վեճերի շրջանակում համարվում է, որ այդ կողմի գտնվելու վայրը տվյալ պետությունում է:

3. Սույն բաժինը չի կիրառվում փոխադրման պայմանագրերի նկատմամբ՝ բացառությամբ այն պայմանագրերի, որոնցով նախատեսված է ճամփորդության և կացարանի դիմաց մեկ ընդհանուր վարձավճար:

#### **Հոդված 16**

1. Սպառողն իրավասու է պայմանագրի մյուս կողմի դեմ հայց հարուցել՝ վերջինիս գտնվելու վայրի անդամ պետության կամ սպառողի բնակության վայրի դատարան:

<sup>7</sup> ՊՏ L 228, 16.08.1973 թ., էջ 3: Հրահանգը, վերջին՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000/26/ԵՆ հրահանգով դրանում կատարված փոփոխություններով հանդերձ (ՊՏ L 181, 20.07.2000 թ., էջ 65):

<sup>8</sup> ՊՏ L 172, 4.07.1988 թ., էջ 1: Հրահանգը, վերջին՝ 2000/26/ԵՆ հրահանգով դրանում կատարված փոփոխություններով հանդերձ:

<sup>9</sup> ՊՏ L 330, 29.11.1990 թ., էջ 44:

2. Պայմանագրի մյուս կողմը սպառողի դեմ կարող է հայց հարուցել միայն սպառողի բնակության վայրի անդամ պետության դատարան:

3. Սույն հոդվածը չի սահմանափակում սույն բաժնի համաձայն սկզբնական հայցը քննող դատարան հակընդդեմ հայց հարուցելու իրավունքը:

## **Հոդված 17**

Սույն բաժնի դրույթներից շեղումը հնարավոր է միայն այնպիսի համաձայնությամբ՝

1. որը կնքվել է վեճը ծագելուց հետո կամ

2. որը սպառողին թույլ է տալիս հայց հարուցել սույն բաժնում նշված դատարաններից զատ այլ դատարաններ, կամ

3. որը կնքվել է սպառողի և պայմանագրի մյուս կողմի միջև, որոնց գտնվելու (բնակության) վայրը (domicile or habitual residence) պայմանագրի կնքման պահին միևնույն անդամ պետությունում է եղել, և որով իրավասություն է վերապահվում տվյալ անդամ պետության դատարաններին՝ պայմանով, որ այդ համաձայնությունը չհակասի տվյալ անդամ պետության իրավունքին:

## **Բաժին 5**

### **Իրավասությունը անհատական աշխատանքային պայմանագրերի նկատմամբ**

## **Հոդված 18**

1. Անհատական աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ գործերի նկատմամբ իրավասությունը որոշվում է սույն բաժնի դրույթներով՝ չսահմանափակելով 4-րդ հոդվածի և 5-րդ հոդվածի 5-րդ կետի գործողությունը:

2. Երբ աշխատողն անհատական աշխատանքային պայմանագիր է կնքում գործատուի հետ, որի գտնվելու (բնակության) վայրը որևէ անդամ պետությունում չէ, որը, սակայն, անդամ պետություններից մեկում ունի մասնաճյուղ, գործակալություն կամ գործունեության իրականացման այլ վայր, ապա մասնաճյուղի, գործակալության կամ գործունեության իրականացման այլ վայրի գործունեությանն առնչվող վեճերի ժամանակ համարվում է, որ գործատուի գտնվելու վայրը տվյալ անդամ պետությունում է:

## **Հոդված 19**

Գործատուի դեմ, որի գտնվելու (բնակության) վայրն անդամ պետությունում է, հայց կարող է հարուցվել՝

1. գործատուի գտնվելու (բնակության) վայրի անդամ պետության դատարան կամ

2. մեկ այլ անդամ պետությունում՝

ա) այն վայրի դատարան, որտեղ աշխատողը սովորաբար կատարում է իր աշխատանքը կամ այդ աշխատանքի կատարման վերջին վայրի դատարան, կամ

բ) եթե աշխատողն իր աշխատանքը սովորաբար չի կատարում կամ չի կատարել որևէ երկրում՝ այն ձեռնարկատիրական գործունեության վայրի դատարան, որում նա ընդգրկված է որպես աշխատող:

## **Հոդված 20**

1. Գործատուն կարող է հայց հարուցել միայն աշխատողի բնակության վայրի անդամ պետության դատարան:
2. Սույն բաժնի դրույթները չեն սահմանափակում սույն բաժնի համաձայն սկզբնական հայցը քննող դատարան հակընդդեմ հայց հարուցելու իրավունքը:

## **Հոդված 21**

Սույն բաժնի դրույթներից շեղումը հնարավոր է միայն իրավասության մասին այնպիսի համաձայնությամբ՝

1. որը կնքվել է վեճը ծագելուց հետո կամ
2. որն աշխատողին թույլ է տալիս հայց հարուցել սույն բաժնով նախատեսված դատարաններից բացի՝ այլ դատարաններ:

## **Բաժին 6**

### **Բացառիկ իրավասությունը**

## **Հոդված 22**

Անկախ կողմերի գտնվելու (բնակության) վայրից՝ հետևյալ դատարաններն օժտված են բացառիկ իրավասությամբ՝

1. անշարժ գույքի գտնվելու վայրի անդամ պետության դատարանները՝ այն հայցերի նկատմամբ, որոնց առարկան անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքը կամ դրա վարձակալությունն է:

Սյնուամենայնիվ, երբ հայցի առարկան առավելագույնը օրացուցային վեց ամիս ժամկետով անձնական օգտագործման նպատակով կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրն է, ապա պատասխանողի գտնվելու (բնակության) վայրի անդամ պետության դատարանները նույնպես օժտված են իրավասությամբ, եթե վարձակալը ֆիզիկական անձ է, և եթե վարձատուի ու վարձակալի գտնվելու (բնակության) վայրը միևնույն անդամ պետությունում է.

2. ընկերության, իրավաբանական անձի կամ ասոցիացիայի կառավարման վայրի անդամ պետության դատարանները, երբ հայցի առարկան վերաբերում է ընկերությունների կամ այլ իրավաբանական անձանց, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ասոցիացիաների հիմնադրման վավերությանը, գրանցման անվավերությանը կամ լուծարմանը, կամ դրանց մարմինների կայացրած որոշումների վավերությանը: Կառավարման վայրը որոշելու համար դատարանը կիրառում է իր պետության միջազգային մասնավոր իրավունքի նորմերը.

3. գրանցամատյանի վարման վայրի անդամ պետության դատարանները, երբ հայցի առարկան պետական գրանցամատյաններում կատարված գրառումների վավերությունն է.

4. արտոնագրերի, ապրանքային նշանների, նմուշների կամ հանձնման կամ գրանցման ենթակա նմանատիպ այլ իրավունքների գրանցմանը կամ վավերությանը վերաբերող հայցերի դեպքում՝ այն անդամ պետության դատարանները, ուր անձը դիմել է ի պահ հանձնման կամ գրանցման համար, կամ, որտեղ կատարվել կամ, Համայնքի ընդունած որևէ փաստաթղթի կամ միջազգային որևէ կոնվենցիայի համաձայն, համարվում է, որ կատարվել է գրանցումը:

Չսահմանափակելով Եվրոպական արտոնագրային գրասենյակի՝ «Եվրոպական արտոնագրերի տրամադրման մասին» Մյունխենի 1973 թվականի հոկտեմբերի 5-ի կոնվենցիայով նախատեսված իրավասությունը՝ յուրաքանչյուր անդամ պետության դատարան, անկախ գտնվելու (բնակության) վայրից, տվյալ պետությանը տրամադրված ցանկացած եվրոպական արտոնագրի գրանցմանը կամ վավերությանն առնչվող գործերի նկատմամբ օժտված է բացառիկ իրավասությամբ.

5. վճիռների կատարմանն առնչվող գործերում՝ այն անդամ պետության դատարանները, որտեղ վճիռը կատարվել է կամ պետք է կատարվի:

## **Բաժին 7**

### **Իրավասության համաձայնեցումը (Պրոռոգացիա)**

#### **Հոդված 23**

1. Եթե կողմերը, որոնցից մեկի կամ մի քանիսի գտնվելու (բնակության) վայրը որևէ անդամ պետությունում է, համաձայնության են եկել, որ կոնկրետ իրավահարաբերության կապակցությամբ ծագած կամ ապագայում հնարավոր վեճերը լուծելու իրավասություն պետք է ունենա անդամ պետության դատարանը կամ դատարանները, ապա իրավասությամբ օժտվում է տվյալ դատարանը կամ դատարանները: Այդ իրավասությունը բացառիկ է, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ: Իրավասություն վերապահող համաձայնությունը պետք է՝

ա) կնքվի գրավոր ձևով կամ հաստատվի գրավոր ապացույցով, կամ

բ) կնքվի այնպիսի ձևով, որը համահունչ է կողմերի միջև հաստատված գործելակերպին, կամ

գ) միջազգային առևտրում կամ առևտրային գործունեության մեջ այն ձևով, որը համահունչ է գործարար շրջանառության սովորույթներին, որոնց կողմերը ծանոթ են կամ պետք է ծանոթ լինեին և որոնք առևտրի այդ ասպարեզում հայտնի են և սովորաբար կիրառվում են որոշակի առևտրային հարաբերություններում կնքվող պայմանագրերի կողմերի կողմից:

2. Էլեկտրոնային միջոցներով ցանկացած հաղորդակցություն, որն ապահովում է համաձայնության տևական գրանցումը, համարժեք է «գրավոր ձևին»:

3. Եթե համաձայնությունը կնքվում է կողմերի միջև, որոնց գտնվելու (բնակության) վայրը անդամ պետությունում չէ, ապա այլ անդամ պետությունների դատարաններն իրավասություն չունեն այդ վեճերի նկատմամբ, եթե ընտրված դատարանը կամ դատարանները չեն հրաժարվել իրենց իրավասությունից:

4. Անդամ պետության դատարանը կամ դատարանները, որոնց հավատարմագրային կառավարման պայմանագրով համապատասխան իրավասություն է վերապահված, բացառիկ իրավասություն ունեն կառավարման հիմնադրի, կառավարչի կամ շահառուի դեմ հարուցված ցանկացած հայցի նկատմամբ, եթե վերջինս վերաբերում է այդ անձանց միջև հարաբերություններին կամ հավատարմագրային կառավարման շրջանակներում նրանց իրավունքներին կամ պարտականություններին:

5. Հավատարմագրային կառավարման պայմանագրով նախատեսված համաձայնությունները կամ դրույթները, որոնցով իրավասություն է վերապահված, իրավաբանական ուժ չունեն, եթե հակասում են 13-րդ, 17-րդ կամ 21-րդ հոդվածներին, կամ, եթե դրանցով փորձ է արվում բացառել այն դատարանների իրավասությունը, որոնց 22-րդ հոդվածով վերապահված է բացառիկ իրավասություն:

## **Հոդված 24**

Սույն Կանոնակարգի այլ դրույթներով նախատեսված իրավասությունից բացի՝ իրավասություն ունի նաև որևէ անդամ պետության այն դատարանը, ուր ներկայանում է պատասխանողը: Սույն կանոնը չի կիրառվում, եթե պատասխանողը ներկայացել է իրավասությունը վիճարկելու նպատակով, կամ եթե մեկ այլ դատարան օժտված է բացառիկ իրավասությամբ՝ համաձայն 22-րդ հոդվածի:

## **Բաժին 8**

### **Իրավասության և ընդունելիության քննությունը**

#### **Հոդված 25**

Երբ որևէ անդամ պետության դատարան քննում է մի հայց, որի նկատմամբ, 22-րդ հոդվածի համաձայն, բացառիկ իրավասություն ունի մեկ այլ անդամ պետության դատարան, ապա առաջին դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ հայտարարել, որ իրավասություն չունի տվյալ գործի նկատմամբ:

#### **Հոդված 26**

1. Երբ պատասխանողի դեմ, որի գտնվելու (բնակության) վայրը անդամ պետություններից մեկում է, հայց է հարուցվում այլ անդամ պետության դատարան, և պատասխանողը չի ներկայանում, ապա դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ հայտարարել, որ ինքն իրավասություն չունի տվյալ գործի նկատմամբ՝ բացառությամբ, երբ այդ դատարանի իրավասությունը բխում է սույն Կանոնակարգի դրույթներից:

2. Դատարանը պարտավոր է գործի քննությունը կասեցնել այնքան, մինչև կհաստատվի, որ պատասխանողը վարույթ հարուցելու հիմք հանդիսացող փաստաթուղթը կամ դրան համարժեք փաստաթուղթն ստացել է բավարար ժամանակ առաջ, որպեսզի հնարավոր լիներ նախապատրաստել իր պաշտպանությունը, կամ որ այդ ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ բոլոր միջոցները:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերության փոխարեն կիրառվում է «Անդամ պետություններում քաղաքացիական և առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղթերը հանձնելու մասին» Խորհրդի 2000 թվականի մայիսի 29-ի թիվ 1348/2000 (ԵՀ)<sup>10</sup> կանոնակարգի 19-րդ հոդվածը, եթե սույն Կանոնակարգի համաձայն, վարույթ հարուցելու համար անհրաժեշտ փաստաթուղթը կամ դրան համարժեք փաստաթուղթը հարկավոր է անդամ պետությունից ուղարկել այլ անդամ պետություն:

4. Եթե թիվ 1348/2000 (ԵՀ) կանոնակարգի դրույթները կիրառելի չեն, կիրառվում է «Քաղաքացիական կամ առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղթերն արտերկրում հանձնելու մասին» 1965 թվականի նոյեմբերի 15-ի Հաագայի կոնվենցիայի 15-րդ հոդվածը, եթե վարույթ հարուցելու համար անհրաժեշտ փաստաթուղթը կամ դրան համարժեք փաստաթուղթը, նշված Կոնվենցիայի համաձայն, հարկավոր է եղել ուղարկել մեկ երկրից մյուսը:

## **Բաժին 9**

### **Վարույթում գտնվող միմյանց հետ կապված հայցերը**

#### **Հոդված 27**

1. Երբ հայցային միևնույն հիմքով և միևնույն կողմերի միջև վեճի վերաբերյալ հայց է հարուցվում տարբեր անդամ պետությունների դատարաններ, ապա հայցի քննությունն առաջինն սկսած դատարանից բացի, բոլոր մյուս դատարանները պարտավոր են սեփական նախաձեռնությամբ կասեցնել իրենց վարույթներն այնքան ժամանակ, մինչև հաստատվի հայցի քննությունն առաջինը սկսած դատարանի իրավասությունը:

2. Երբ հայցի քննությունն առաջինն սկսած դատարանի իրավասությունը հաստատվում է, ապա բոլոր մյուս դատարանները պարտավոր են հրաժարվել իրավասությունից՝ հոգուտ առաջին դատարանի:

#### **Հոդված 28**

1. Երբ տարբեր անդամ պետությունների դատարաններում քննվում են միմյանց հետ կապված հայցեր, ապա հայցի քննությունն առաջինն սկսած դատարանից բացի, ցանկացած այլ դատարան կարող է կասեցնել վարույթը:

2. Եթե նշված հայցերը քննվում են առաջին ատյանում, ապա հայցի քննությունն առաջինը սկսած դատարանից բացի, ցանկացած այլ դատարան, կողմերից որևէ մեկի միջնորդությամբ, կարող է հրաժարվել իրավասությունից, եթե հայցի քննությունը առաջինը սկսած դատարանը իրավասու է տվյալ հայցերի նկատմամբ և եթե այդ դատարանի վայրի իրավունքը թույլատրում է երկու հայցերի համատեղ քննությունը:

3. Սույն հոդվածի իմաստով հայցերը համարվում են փոխկապակցված, եթե դրանք այնքան կապված են իրար հետ, որ տրամաբանական է դրանք միասին քննել և լուծել՝ խուսափելու համար առանձին վարույթների հետևանքով իրարամերժ վճիռներ կայացնելուց:

---

<sup>10</sup> ՊՏ L 160, 30.06.2000 թ., էջ 37:



## **Հոդված 29**

Եթե հայցերի նկատմամբ բացառիկ իրավասություն ունի մեկից ավելի դատարան, ապա հայցի քննությունն առաջինն սկսած դատարանից բացի, ցանկացած այլ դատարան պարտավոր է հրաժարվել իրավասությունից հոգուտ առաջին դատարանի:

## **Հոդված 30**

Սույն բաժնի իմաստով դատարանի կողմից հայցի քննության սկիզբ է համարվում՝

1. այն պահը, երբ վարույթի հիմք հանդիսացող կամ համարժեք որևէ փաստաթուղթ է ներկայացվում դատարան՝ պայմանով, որ դրանից հետո հայցվորը կատարել է այն քայլերը, որ պարտավոր էր կատարել պատասխանողին այդ փաստաթղթերը հանձնելու համար, կամ

2. եթե փաստաթուղթը պետք է պատասխանողին հանձնվի նախքան հայցը դատարան ներկայացնելը, ապա այն պահը, երբ հանձնելու համար պատասխանատու մարմինը ստացել է փաստաթուղթը՝ պայմանով, որ դրանից հետո հայցվորը կատարել է այն քայլերը, որոնք պարտավոր էր կատարել փաստաթուղթը դատարան ներկայացնելու նպատակով:

## **Բաժին 10**

### **Հայցի ապահովման միջոցները**

## **Հոդված 31**

Անդամ պետության դատարաններ կարելի է դիմել հայցի ապահովման այնպիսի միջոցներ ձեռնարկելու միջնորդությամբ, որոնք նախատեսված են տվյալ պետության իրավունքով, նույնիսկ եթե սույն Կանոնակարգի համաձայն, գործն ըստ էության քննելու իրավասությամբ օժտված է մեկ այլ անդամ պետության դատարան:

## **ԳԼՈՒԽ III**

### **ՃԱՆԱԶՈՒՄԸ ԵՎ ԿՍՏԱՐՈՒՄԸ**

## **Հոդված 32**

Սույն Կանոնակարգի իմաստով «վճիռ» նշանակում է ցանկացած վճիռ, որը կայացրել է որևէ անդամ պետության դատարան կամ տրիբունալ՝ անկախ վճռի անվանումից, ներառյալ հրամանագրերը, հրամանները, որոշումները կամ կատարողական թերթերը, ինչպես նաև դատական ծառայողի կողմից սահմանված ծախսերը:

## **Բաժին 1**

### **Ճանաչումը**

### **Հողված 33**

1. Որևէ անդամ պետությունում կայացված վճիռը մյուս անդամ պետություններում ճանաչվում է առանց դրա համար պահանջվող որևէ հատուկ ընթացակարգի:
2. Ցանկացած շահագրգիռ կողմ, որը վեճի շրջանակներում որպես հիմնախնդիր առաջ է քաշում վճռի ճանաչումը, իրավասու է սույն գլխի 2-րդ և 3-րդ բաժիններով նախատեսված ընթացակարգով պահանջել տվյալ վճռի ճանաչման մասին որոշում:
3. Եթե որևէ անդամ պետության դատարանում քննվող գործի ելքը կախված է ճանաչման մասին որոշումից՝ որպես երկրորդական հարց, ապա տվյալ դատարանն իրավասություն ունի այդ հարցի նկատմամբ:

### **Հողված 34**

Վճիռը չի ճանաչվում՝

1. Եթե դրա ճանաչումն ակնհայտորեն հակասում է հանրային կարգին այն անդամ պետությունում, որտեղ ճանաչման մասին պահանջ է ներկայացվել:
2. Եթե այն կայացվել է պատասխանողի չներկայանալու պայմաններում, այն դեպքում, երբ պատասխանողը չի ստացել վարույթ հարուցելու համար անհրաժեշտ փաստաթուղթը կամ դրան համարժեք փաստաթուղթն այն ժամանակ և այն կերպ, որ նրան հնարավորություն կտար նախապատրաստելու իր պաշտպանությունը՝ բացառությամբ, երբ պատասխանողը, ունենալով նման հնարավորություն, չի բողոքարկել վճիռը:
3. Եթե այն հակասում է միևնույն կողմերի միջև վեճի կապակցությամբ այն անդամ պետությունում կայացված որևէ վճռի, որտեղ վճռի ճանաչման պահանջ է ներկայացվել:
4. Եթե այն հակասում է մեկ այլ անդամ կամ ոչ անդամ պետության դատարանի՝ միևնույն հայցային հիմքով և միևնույն կողմերի մասնակցությամբ նախկինում կայացրած որևէ վճռի՝ պայմանով, որ նախկին վճիռը բավարարի տվյալ անդամ պետությունում ճանաչվելու համար անհրաժեշտ պայմանները:

### **Հողված 35**

1. Ավելին, վճիռը չի ճանաչվում, եթե այն հակասում է II գլխի 3-րդ, 4-րդ կամ 6-րդ բաժիններին, կամ 72-րդ հոդվածով նախատեսված դեպքում:
2. Ծագման անդամ պետության դատարանի համար իր իրավասությունը որոշելիս հիմք հանդիսացած փաստական հանգամանքների վերաբերյալ եզրակացությունը պարտադիր է դիմում ստացած դատարանի կամ այլ մարմնի համար նախորդ կետում նշված իրավասության հիմքերը քննելիս:
3. Սույն հոդվածի 1-ին պարբերության պահանջների պահպանմամբ՝ ծագման անդամ պետության դատարանի իրավասությունը ենթակա չէ վերանայման: 34-րդ հոդվածի 1-ին կետում նշված հանրային կարգի մասին վերապահումը չի կարող կիրառվել իրավասությանը վերաբերող նորմերի նկատմամբ:

### **Հոդված 36**

Օտարերկրյա պետությունում կայացված վճիռն որևէ պարագայում չի կարող ըստ էության վերանայվել:

### **Հոդված 37**

1. Անդամ պետության դատարանը, որտեղ մեկ այլ անդամ պետությունում կայացված վճռի ճանաչման պահանջ է ներկայացվել, իրավասու է կասեցնել վարույթը, եթե տվյալ վճռի դեմ սովորական վերաքննիչ բողոք է բերվել:
2. Անդամ պետության դատարանը, որտեղ Իռլանդիայում կամ Միացյալ Թագավորությունում կայացված վճռի ճանաչման պահանջ է ներկայացվել, իրավասու է կասեցնել վարույթը, եթե վճիռը կայացրած պետությունում կատարման գործընթացը կասեցվել է վճռի բողոքարկման արդյունքում:

## **Բաժին 2**

### **Կատարումը**

### **Հոդված 38**

1. Անդամ պետություններից որևէ մեկում կայացված և այնտեղ կատարման ենթակա վճիռը կարող է կատարվել մեկ այլ անդամ պետությունում, երբ այն, շահագրգիռ կողմերից մեկի դիմումի հիման վրա, այդ պետությունում ճանաչվել է որպես կատարման ենթակա:
2. Այնուամենայնիվ, Միացյալ Թագավորության դեպքում, նման վճիռը ենթակա է կատարման Անգլիայում և Ուելսում, Շոտլանդիայում կամ Հյուսիսային Իռլանդիայում, երբ որևէ շահագրգիռ կողմի դիմումի հիման վրա՝ կատարման համար վճիռը գրանցվել է Միացյալ Թագավորության տվյալ մասում:

### **Հոդված 39**

1. Դիմումը ներկայացվում է II հավելվածի ցանկում նշված դատարան կամ իրավասու մարմին:
2. Տեղական ընդդատությունը որոշվում է այն կողմի գտնվելու (բնակության) վայրի հիման վրա, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, կամ վճռի կատարման վայրի հիման վրա:

### **Հոդված 40**

1. Դիմում ներկայացնելու կարգը որոշվում է այն անդամ պետության իրավունքով, որտեղ վճռի կատարման պահանջ է ներկայացվել:
2. Դիմողը վարույթի մասին դատական ծանուցումների համար պարտավոր է նշել որևէ հասցե, որը պետք է գտնվի այն դատարանի դատական տարածքում, որին ներկայացվել է դիմումը: Այնուամենայնիվ, եթե այն անդամ պետության իրավունքը,

որտեղ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, չի նախատեսում նման հասցեի տրամադրում, ապա դիմողը պետք է տվյալ գործով ներկայացուցիչ նշանակի (representative ad litem):

3. 53-րդ հոդվածում նշված փաստաթղթերը պետք է կցվեն դիմումին:

### **Հոդված 41**

Վճիռը կատարման ենթակա է ճանաչվում 53-րդ հոդվածում նշված ձևական ընթացակարգի ավարտից անմիջապես հետո՝ առանց 34-րդ և 35-րդ հոդվածով նախատեսված վերանայման: Կողմը, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, վարույթի այդ փուլում իրավունք չունի դիմումի վերաբերյալ որևէ առարկություն ներկայացնել:

### **Հոդված 42**

1. Դիմողն անհապաղ տեղեկացվում է վճիռը կատարման ենթակա ճանաչելու մասին դիմումի վերաբերյալ կայացված որոշման մասին այն անդամ պետության իրավունքով նախատեսված կարգով, որտեղ վճռի կատարման պահանջ է ներկայացվել:
2. Վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշումը հանձնվում է այն կողմին, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել՝ կից ներկայացնելով նաև վճիռը, եթե այն դեռ չի հանձնվել նրան:

### **Հոդված 43**

1. Վճիռը կատարման ենթակա ճանաչելու մասին դիմումի վերաբերյալ կայացված որոշումը կարող է բողոքարկել կողմերից յուրաքանչյուրը:
2. Բողոքը պետք է ներկայացվի III հավելվածի ցանկում նշված դատարան:
3. Բողոքը պետք է քննվի՝ համաձայն վեճերի լուծման ընթացակարգը կարգավորող նորմերի:
4. Եթե կողմը, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, դիմողի բերած բողոքի առնչությամբ վարույթի ընթացքում չի ներկայանում վերաքննություն իրականացնող դատարան, ապա կիրառվում են 26-րդ հոդվածի 2-4-րդ պարբերությունները, նույնիսկ եթե կողմի, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, գտնվելու (բնակության) վայրը անդամ պետություններից որևէ մեկում չէ:
5. Վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշման դեմ բողոք կարող է բերվել այդ որոշման հանձնումից հետո մեկամսյա ժամկետում: Եթե կողմի, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, գտնվելու (բնակության) վայրը վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշման կայացման անդամ պետությունից բացի այլ անդամ պետությունում է, ապա բողոքարկման համար տրվում է երկամսյա ժամկետ, որի հաշվարկը սկսվում է որոշումը առձեռն կամ բնակության վայրում հանձնելու պահից: Հեռավորության պատճառով նշված ժամկետի երկարաձգում չի թույլատրվում:

#### **Հոդված 44**

Բողոքի վերաբերյալ կայացված վճիռը կարող է վիճարկվել միայն IV հավելվածում նշված վերաքննության կարգով:

#### **Հոդված 45**

1. Դատարանը, որին 43-րդ կամ 44-րդ հոդվածների հիման վրա բողոք է ներկայացվել, կարող է մերժել վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշման կայացումը կամ բեկանել այդպիսի որոշումը միայն 34-րդ և 35-րդ հոդվածներում նշված հիմքերից որևէ մեկով: Դատարանը որոշում է կայացնում անհապաղ:

2. Օտարերկրյա պետությունում կայացված վճիռը որևէ պարագայում չի կարող վերանայվել ըստ էության:

#### **Հոդված 46**

1. Դատարանը, որին 43-րդ կամ 44-րդ հոդվածի համաձայն բողոք է ներկայացվել, կարող է այն անձի դիմումի հիման վրա, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, կասեցնել վարույթը, եթե վճռի դեմ սովորական բողոք է բերվել վճիռը կայացրած անդամ պետությունում, կամ եթե նման վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետը դեռ չի լրացել. ընդ որում՝ երկրորդ դեպքում դատարանը կարող է նշել այն ժամկետը, որի ընթացքում պետք է ներկայացվի բողոքը:

2. Եթե վճիռը կայացվել է Իռլանդիայում կամ Միացյալ Թագավորությունում, ապա ծագման անդամ պետությունում գոյություն ունեցող բողոքի ցանկացած ձև՝ սույն հոդվածի 1-ին պարբերության իմաստով, համարվում է սովորական բողոքարկում:

3. Դատարանը կարող է նաև վճռի կատարումը պայմանավորել իր կողմից որոշված ապահովման միջոցի տրամադրմամբ:

#### **Հոդված 47**

1. Եթե վճիռը սույն Կանոնակարգի համաձայն ենթակա է ճանաչման, ապա դիմողին ոչինչ չի կարող զրկել անդամ պետության իրավունքի համաձայն հայցի ապահովման միջոցներից օգտվելու իրավունքից՝ առանց

41-րդ հոդվածի համաձայն վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնելու անհրաժեշտության:

2. Վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշումից բխում է նաև հայցի ապահովման ցանկացած միջոցի դիմելու իրավունքը:

3. Վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշման բողոքարկման՝ հոդված 43«5»-ով նախատեսված ժամկետում և նախքան բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը, կատարմանն ուղղված որևէ միջոց չի ձեռնարկվում՝ բացի այն կողմի գույքի նկատմամբ ապահովման միջոցներից, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել:

## **Հոդված 48**

1. Եթե օտարերկրյա պետությունում մի քանի գործերի վերաբերյալ վճիռ է կայացվել, և հնարավոր չէ դրանց բոլորի մասով կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնել, ապա դատարանը կամ իրավասու մարմինը որոշում է կայացնում վճիռը՝ դրանցից մեկի կամ մի քանիսի մասով կատարման ենթակա լինելու մասին:

2. Դիմողը կարող է հայցել վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշում՝ վճռի միայն որոշակի մասով:

## **Հոդված 49**

Օտարերկրյա պետությունում կայացված վճիռը, որով սահմանվում են պարբերական վճարումներ՝ տուգանքի տեսքով, ենթակա է կատարման այն անդամ պետությունում, որտեղ կատարման մասին պահանջ է ներկայացվել, միայն, եթե ծագման անդամ պետության դատարանը վերջնականապես որոշել է վճարման ենթակա գումարը:

## **Հոդված 50**

Ծագման անդամ պետությունում մասնակի կամ լրիվ իրավաբանական օգնություն ստացած կամ ծախսերից ազատված դիմողը, սույն բաժնով նախատեսված վարույթի ընթացքում, իրավունք ունի օգտվելու անդամ պետության իրավունքով նախատեսված ամենանպաստավոր իրավաբանական օգնությունից, ինչպես նաև պետք է հնարավորինս ազատվի ծախսերից:

## **Հոդված 51**

Արգելվում է օտարերկրյա քաղաքացի լինելու կամ տվյալ անդամ պետությունում գտնվելու վայրի բացակայության կամ ռեզիդենտ չլինելու պատճառով արժեթուղթ, պարտատոմս կամ դեպոզիտ պահանջել այն անձից, որը անդամ պետությունում մեկ այլ անդամ պետությունում կայացված վճռի կատարման պահանջ է ներկայացնում:

## **Հոդված 52**

Վճիռը կատարման ենթակա լինելու վերաբերյալ վարույթներում խնդրո առարկա հայցի արժեքի առնչությամբ ոչ մի վճար կամ տուրք չի կարող գանձվել այն անդամ պետությունում, որտեղ վճռի կատարման պահանջ է ներկայացվել:

## **Բաժին 3**

### **Ընդհանուր դրույթներ**

## **Հոդված 53**

1. Վճիռը ճանաչման կամ կատարման ենթակա լինելու մասին պահանջ ներկայացնող կողմը պարտավոր է ներկայացնել վճռի այնպիսի օրինակ, որը

բավարարի դրա նույնականության հաստատման համար անհրաժեշտ պայմանները:

2. Ճանաչման կամ կատարման ենթակա լինելու մասին պահանջ ներկայացրած կողմը պարտավոր է ներկայացնել նաև 54-րդ հոդվածում նշված տեղեկանքը՝ չսահմանափակելով 55-րդ հոդվածի գործողությունը:

#### **Հոդված 54**

Այն անդամ պետության դատարանը կամ իրավասու մարմինը, որտեղ կայացվել է վճիռը, պարտավոր է շահագրգիռ ցանկացած կողմի պահանջով վերջինիս տեղեկանք տրամադրել՝ սույն Կանոնակարգի V հավելվածում առկա նմուշի ձևով:

#### **Հոդված 55**

1. Եթե 54-րդ հոդվածում նշված տեղեկանքը չի ներկայացվում, ապա դատարանը կամ իրավասու մարմինը կարող է սահմանել այն ներկայացնելու ժամկետ կամ ընդունել դրան համարժեք փաստաթուղթ, կամ, եթե գտնում է, որ իր տրամադրության տակ եղած տեղեկությունները բավարար են, կարող է ընդհանրապես նման տեղեկանք չպահանջել:

2. Դատարանի կամ իրավասու մարմնի պահանջով պետք է ապահովվել փաստաթղթերի թարգմանությունը: Թարգմանությունը պետք է վավերացված լինի անդամ պետություններից մեկում՝ այն վավերացնելու լիազորությամբ օժտված անձի կողմից:

#### **Հոդված 56**

Հոդվածներ 53–ով կամ 55«2»–ով նախատեսված փաստաթղթերի, ինչպես նաև գործով ներկայացուցիչ նշանակելու մասին փաստաթղթի կապակցությամբ օրինականացման կամ նման որևէ այլ ձևական պահանջ չի նախատեսվում:

### **ԳԼՈՒԽ IV**

#### **ՆՈՒՅՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

#### **Հոդված 57**

1. Անդամ պետություններից մեկում պաշտոնապես իբրև նույնական փաստաթուղթ կազմված կամ գրանցված և կատարման ենթակա փաստաթուղթը մեկ այլ անդամ պետությունում հայտարարվում է կատարման ենթակա՝ 38-րդ և հետագա հոդվածներում նշված ընթացակարգերի համաձայն ներկայացված դիմումի հիման վրա: Դատարանը, ուր 43-րդ կամ 44-րդ հոդվածի համաձայն բողոք է բերվել, կարող է մերժել փաստաթուղթը կատարման ենթակա լինելու մասին որոշման կայացումը կամ բեկանել այդպիսի որոշումը միայն այն դեպքում, երբ փաստաթղթի

կատարումն ակնհայտորեն հակասում է տվյալ անդամ պետության հանրային կարգին:

2. Այնպիսի պարտավորությունների վերաբերյալ վարչական մարմինների հետ կնքված կամ վերջիններիս կողմից հաստատված նույնական փաստաթղթերը սույն հոդվածի 1-ին պարբերության իմաստով նույնպես համարվում են նույնական:

3. Ներկայացված փաստաթուղթը պետք է համապատասխանի ծագման անդամ պետությունում դրա նույնականության հաստատման համար անհրաժեշտ պայմաններին:

4. III գլխի 3-րդ բաժինը կիրառվում է ըստ անհրաժեշտության: Այն անդամ պետության իրավասու մարմինը, ուր կազմվել կամ գրանցվել է նույնական փաստաթուղթը, շահագրգիռ ցանկացած կողմի պահանջով պարտավոր է վերջինիս տրամադրել տեղեկանք՝ սույն Կանոնակարգի VI հավելվածում նշված օրինակելի ձևով:

## **Հոդված 58**

Հաշտության համաձայնությունը, որը հաստատվել է դատարանի կողմից վարույթի ընթացքում և ենթակա է կատարման այն անդամ պետությունում, որտեղ այն կնքվել է, պետք է կատարվի նշված անդամ պետությունում նույնական փաստաթղթերի համար սահմանված կարգով: Դատարանը կամ անդամ պետության համապատասխան իրավասու մարմինը, ուր հաստատվել է դատական վարույթի ընթացքում կնքված հաշտության համաձայնությունը, պարտավոր է շահագրգիռ ցանկացած կողմի պահանջով վերջինիս տեղեկանք տրամադրել սույն Կանոնակարգի V հավելվածում զետեղված օրինակելի ձևով:

## **ԳԼՈՒԽ V**

### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

## **Հոդված 59**

1. Որոշելու համար, թե արդյոք գործի որևէ կողմի գտնվելու (բնակության) վայրը գործը վարույթ ընդունած դատարանի անդամ պետությունում է, դատարանը կիրառում է տվյալ պետության ներպետական իրավունքը:

2. Եթե կողմի գտնվելու (բնակության) վայրը այն անդամ պետությունում չէ, որտեղ քննվում է գործը, ապա կողմի՝ մեկ այլ անդամ պետությունում գտնվելու (բնակության) վայրի առկայության հանգամանքը որոշելու նպատակով դատարանը կիրառում է այդ անդամ պետության իրավունքը:

## **Հոդված 60**

1. Սույն Կանոնակարգի նպատակներով ընկերության կամ այլ իրավաբանական անձի կամ ֆիզիկական, կամ իրավաբանական անձանց ասոցիացիայի գտնվելու վայր է համարվում այն վայրը, որտեղ՝

ա) ըստ կանոնադրության դրա կառավարման վայրն է կամ

բ) կառավարման կենտրոնական մարմինն է, կամ



զ) ձեռնարկատիրական գործունեության իրականացման հիմնական վայրն է:

2. Միացյալ Թագավորության և Իռլանդիայի պարագայում «կառավարման վայր՝ ըստ կանոնադրության» նշանակում է գտնվելու վայր կամ, եթե այդպիսին չկա, ապա՝ գրանցման վայր կամ, եթե այդպիսի վայր էլ չկա, ապա՝ այն վայրը, որի իրավունքի համաձայն տեղի է ունեցել հիմնադրումը:

3. Որոշելու համար, թե հավատարմագրային կառավարման վայրը այն անդամ պետությունն է, ուր քննվում է հայցը, թե՛ ոչ, դատարանը կիրառում է իր պետության միջազգային մասնավոր իրավունքի նորմերը:

## **Հոդված 61**

Չսահմանափակելով ներպետական իրավունքի առավել նպաստավոր դրույթների գործողությունը՝ անձինք, որոնց գտնվելու (բնակության) վայրը անդամ պետություններից մեկում է և որոնց ոչ ղիտավորյալ որևէ հանցանքի համար առաջադրված մեղադրանքը քննում են մեկ այլ անդամ պետության քրեական դատարանները, որի քաղաքացի նրանք չեն հանդիսանում, իրավունք ունեն պաշտպանվելու համապատասխան իրավասությամբ օժտված անձանց կողմից, նույնիսկ եթե իրենք անձամբ չեն ներկայանում դատարան: Այնուամենայնիվ, գործը քննող դատարանը կարող է պահանջել, որ անձն անձամբ ներկայանա դատարան: Չներկայանալու դեպքում քաղաքացիական գործով վճիռը, որը կայացվել է՝ առանց տվյալ անձին իր պաշտպանությունը կազմակերպելու հնարավորություն ընձեռելու, կարող է չճանաչվել և չկատարվել մյուս անդամ պետություններում:

## **Հոդված 62**

Շվեդիայում վճարման կարգադրության (betalningsföreläggande) և աջակցության (handräckning) վերաբերյալ արագացված դատավարության շրջանակներում «դատարան» հասկացությունը ներառում է նաև Շվեդիայի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (kronofogdemyndighet):

## **Հոդված 63**

1. Անձը, որի գտնվելու (բնակության) վայրը Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության տարածքում է և որի դեմ հայց է հարուցվել մեկ այլ անդամ պետության դատարան հոդված 5«1»-ի համաձայն, կարող է հրաժարվել այդ դատարանի իրավասությունն ընդունելուց, եթե ապրանքի առաքման կամ ծառայությունների մատուցման վերջնական վայրը Լյուքսեմբուրգում է:

2. Եթե սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն ապրանքի առաքման կամ ծառայությունների մատուցման վերջնական վայրը Լյուքսեմբուրգում է, ապա իրավասություն վերապահելու մասին ցանկացած համաձայնություն, վավեր լինելու նպատակով, պետք է հոդված 23«1»«ա»-ի իմաստով ընդունված լինի գրավոր կամ հաստատվի գրավոր ապացույցներով:

3. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում ֆինանսական ծառայությունների մատուցման պայմանագրերի նկատմամբ:

4. Սույն հոդվածի դրույթները գործում են սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո վեց տարվա ընթացքում:

#### **Հոդված 64**

1. Հունաստանում կամ Լեհաստանում գրանցված ծովային նավի նավապետի և անձնակազմի որևէ անդամի միջև վարձատրության կամ ծառայության այլ պայմանների շուրջ ծագած վեճի վերաբերյալ վարույթներում անդամ պետության դատարանը պետք է պարզի, թե արդյոք նավի համար պատասխանատու դիվանագիտական կամ հյուպատոսական պաշտոնյան վեճի մասին ծանուցվել է, թե ոչ: Դատարանը կարող է գործել նշված պաշտոնյայի ծանուցումից անմիջապես հետո:

2. Սույն հոդվածի դրույթները գործում են սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո վեց տարվա ընթացքում:

#### **Հոդված 65**

1. Գերմանիայում և Ավստրիայում սույն կանոնակարգի հոդվածներ 6«2»-ով և 11-ով նախատեսված իրավասությունը երաշխիքի կամ երաշխավորության վերաբերյալ, ինչպես նաև երրորդ անձանց ներգրավմամբ այլ վարույթներում չի գործում: Անձի դեմ, որի գտնվելու (բնակության) վայրը այլ անդամ պետությունում է, հայց կարող է հարուցվել հետևյալ դատարաններ

ա) Գերմանիայի դատարաններ՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (Zivilprozessordnung)՝ երրորդ անձանց ծանուցման մասին 68-րդ, 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածների համաձայն.

բ) Ավստրիայի դատարաններ՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (Zivilprozessordnung)՝ երրորդ անձանց ծանուցման մասին 21-րդ հոդվածի համաձայն:

2. Հոդվածներ 6«2»-ի և 11-ի հիման վրա այլ անդամ պետություններում կայացված վճիռները Գերմանիայում և Ավստրիայում ենթակա են ճանաչման և կատարման՝ III գլխին համապատասխան: Սույն հոդվածի 1-ին պարբերության դրույթների կիրառմամբ այդ պետություններում կայացված վճիռների՝ երրորդ անձանց համար հնարավոր հետևանքները նույնպես ճանաչվում են այլ անդամ պետություններում:

### **ԳԼՈՒԽ VI**

#### **ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### **Հոդված 66**

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է միայն այն դատական վարույթների և փաստաթղթերի նկատմամբ, որոնք համապատասխանաբար հարուցվել կամ պաշտոնապես կազմվել կամ գրանցվել են իբրև նույնական փաստաթղթեր սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո:

2. Այնուամենայնիվ, եթե ծագման անդամ պետությունում վարույթը հարուցվել է նախքան սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը, ապա այդ օրվանից հետո

կայացված վճիռները ենթակա են ճանաչման և կատարման սույն Կանոնակարգի III գլխին համապատասխան՝

ա) եթե ծագման անդամ պետությունում վարույթը հարուցվել է Բրյուսելի կոնվենցիան կամ Լուզանոյի կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո, ինչպես ծագման, այնպես էլ ճանաչման կամ կատարման վերաբերյալ պահանջ ստացող անդամ պետությունում.

բ) մյուս բոլոր դեպքերում, եթե իրավասությունը հիմնված է եղել II գլխի կամ ծագման պետության և պահանջ ստացող անդամ պետության միջև կնքված այն կոնվենցիայի դրույթներին համահունչ դրույթների վրա, որը գործում էր վարույթը հարուցելու պահին:

## **ԳԼՈՒԽ VII**

### **ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ**

#### **Հոդված 67**

Սույն Կանոնակարգը չի սահմանափակում որոշակի գործերով իրավասությունը, ինչպես նաև վճիռների ճանաչումն ու կատարումը կարգավորող այն դրույթների կիրառումը, որոնք նախատեսված են Համայնքի փաստաթղթերով կամ դրանց հիման վրա համապատասխանեցված ներպետական օրենսդրությամբ:

#### **Հոդված 68**

1. Անդամ պետությունների միջև հարաբերություններում սույն Կանոնակարգը փոխարինում է Բրյուսելի կոնվենցիային՝ բացառությամբ անդամ պետությունների այն տարածքների, որոնց վրա տարածվում է նշված կոնվենցիայի գործողությունը և չի տարածվում սույն Կանոնակարգը՝ Համաձայնագրի 299-րդ հոդվածի համաձայն:

2. Այնքանով, որքանով սույն Կանոնակարգը փոխարինում է անդամ պետությունների միջև Բրյուսելի կոնվենցիայի դրույթները, Կոնվենցիային արված ցանկացած հղում պետք է հասկանալ որպես հղում սույն Կանոնակարգին:

#### **Հոդված 69**

Հոդվածներ 66«2» և 70–ի դրույթների պահպանմամբ՝ անդամ պետությունների միջև հարաբերություններում սույն Կանոնակարգը փոխարինում է երկու կամ ավելի անդամ պետությունների միջև կնքված հետևյալ կոնվենցիաներին և պայմանագրերին՝

- Բելգիայի և Ֆրանսիայի միջև 1899 թվականի հուլիսի 8-ին Փարիզում ստորագրված՝ «Իրավասության և վճիռների, արբիտրաժային վճիռների և նույնական փաստաթղթերի վավերության ու կատարման մասին» կոնվենցիան.

- Բելգիայի և Նիդեռլանդների միջև 1925 թվականի մարտի 28-ին Բրյուսելում ստորագրված՝ «Իրավասության, սնանկության և վճիռների, արբիտրաժային

վճիռների և նույնական փաստաթղթերի վավերության ու կատարման մասին» կոնվենցիան.

- Ֆրանսիայի և Իտալիայի միջև 1930 թվականի հունիսի 3-ին Հռոմում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների կատարման մասին» կոնվենցիան.

- Գերմանիայի և Իտալիայի միջև 1936 թվականի մարտի 9-ին Հռոմում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.

- Բելգիայի և Ավստրիայի միջև 1957 թվականի հոկտեմբերի 25-ին Վիեննայում ստորագրված՝ «Ալիմենտային պարտավորություններին առնչվող վճիռների և նույնական փաստաթղթերի փոխադարձ ճանաչման և կատարման մասին» կոնվենցիան.

- Գերմանիայի և Բելգիայի միջև 1958 թվականի հունիսի 30-ին Բոննում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների, արբիտրաժային վճիռների և նույնական փաստաթղթերի փոխադարձ ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.

- Նիդեռլանդների և Իտալիայի միջև 1959 թվականի ապրիլի 17-ին Հռոմում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.

- Գերմանիայի և Ավստրիայի միջև 1959 թվականի հունիսի 6-ին Վիեննայում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների, հաշտության համաձայնությունների և նույնական փաստաթղթերի փոխադարձ ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.

- Բելգիայի և Ավստրիայի միջև 1959 թվականի հունիսի 16-ին Վիեննայում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների, արբիտրաժային վճիռների և նույնական փաստաթղթերի փոխադարձ ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.

- Հունաստանի և Գերմանիայի միջև 1961 թվականի նոյեմբերի 4-ին Աթենքում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների, հաշտության համաձայնությունների և նույնական փաստաթղթերի փոխադարձ ճանաչման ու կատարման մասին կոնվենցիան.

- Բելգիայի և Իտալիայի միջև 1962 թվականի ապրիլի 6-ին Հռոմում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների և կատարման ենթակա այլ փաստաթղթերի ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.

- Նիդեռլանդների և Գերմանիայի միջև 1962 թվականի օգոստոսի 30-ին Հաագայում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների և կատարման ենթակա այլ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման ու կատարման մասին կոնվենցիան.

- Նիդեռլանդների և Ավստրիայի միջև 1963 թվականի փետրվարի 6-ին Հաագայում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների և նույնական փաստաթղթերի փոխադարձ ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.

- Ֆրանսիայի և Ավստրիայի միջև 1966 թվականի հուլիսի 15-ին Վիեննայում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների և նույնական փաստաթղթերի ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.

- Իսպանիայի և Ֆրանսիայի միջև Փարիզում 1969 թվականի մայիսի 28-ին ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների և արբիտրաժային վճիռների ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.
- Լյուքսեմբուրգի և Ավստրիայի միջև 1971 թվականի հուլիսի 29-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների և արբիտրաժային վճիռների ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.
- Իտալիայի և Ավստրիայի միջև 1971 թվականի նոյեմբերի 16-ին Հռոմում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների, հաշտության համաձայնությունների և նույնական փաստաթղթերի ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.
- Իսպանիայի և Իտալիայի միջև 1973 թվականի. մայիսի 22-ին Մադրիդում ստորագրված՝ «Իրավական օգնության և քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.
- Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Նորվեգիայի Շվեդիայի և Դանիայի միջև 1977 թվականի հոկտեմբերի 11-ին Կոպենհագենում ստորագրված՝ «Քաղաքացիական գործերով վճիռների ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.
- Ավստրիայի և Շվեդիայի միջև 1982 թվականի սեպտեմբերի 16-ին Ստոկհոլմում ստորագրված՝ «Քաղաքացիական գործերով վճիռների ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.
- Իսպանիայի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև 1983 թվականի նոյեմբերի 14-ին Բոննում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների, հաշտության համաձայնությունների և կատարման ենթակա նույնական փաստաթղթերի ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.
- Իսպանիայի և Ավստրիայի միջև 1984 թվականի փետրվարի 17-ին Վիեննայում ստորագրված՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների, հաշտության համաձայնությունների և կատարման ենթակա նույնական փաստաթղթերի ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.
- Ֆինլանդիայի և Ավստրիայի միջև 1986 թվականի նոյեմբերի 17-ին Վիեննայում ստորագրված՝ «Քաղաքացիական գործերով վճիռների ճանաչման ու կատարման մասին» կոնվենցիան.
- Բելգիայի, Նիդեռլանդների և Լյուքսեմբուրգի միջև 1961 թվականի նոյեմբերի 24-ին Բրյուսելում ստորագրված՝ «Իրավասության, սնանկության և վճիռների, արբիտրաժային վճիռների և նույնական փաստաթղթերի վավերության ու կատարման մասին» պայմանագիրը՝ այնքանով, որքանով այն գործում է:

## **Հոդված 70**

1. Սույն Կանոնակարգով չկարգավորվող գործերի նկատմամբ շարունակում են գործել 69-րդ հոդվածում նշված պայմանագիրը և կոնվենցիաները:
2. Դրանք շարունակում են գործել այն վճիռների և փաստաթղթերի նկատմամբ, որոնք համապատասխանաբար կայացվել կամ կազմվել, կամ գրանցվել են որպես նույնական փաստաթղթեր սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց առաջ:

## **Հոդված 71**

1. Սույն Կանոնակարգը չի շոշափում այն կոնվենցիաների գործողությունը, որոնց մասնակից են անդամ պետությունները, և որոնք որոշակի գործերի առնչությամբ կարգավորում են իրավասությունը կամ վճիռների ճանաչումն ու կատարումը:

2. Միասնական մեկնաբանում ապահովելու նպատակով սույն հոդվածի 1-ին պարբերությունը պետք է կիրառել հետևյալ կերպ՝

ա) սույն Կանոնակարգը չի արգելում կոնվենցիայի մասնակից անդամ պետության դատարանին որևէ որոշակի հարցի մասին իրավասություն ստանձնել՝ համաձայն նշված կոնվենցիայի, նույնիսկ, երբ պատասխանողի գտնվելու (բնակության) վայրը այլ անդամ պետությունում է, որն այդ կոնվենցիայի մասնակից չէ: Գործը քննող դատարանը պետք է ցանկացած դեպքում կիրառի սույն Կանոնակարգի 26-րդ հոդվածը.

բ) որոշակի հարցի մասին որևէ կոնվենցիայով նախատեսված իրավասություն իրականացնող դատարանի՝ անդամ պետությունում կայացրած վճիռը սույն Կանոնակարգով ենթակա է ճանաչման և կատարման մյուս անդամ պետություններում:

Եթե որոշակի հարցի մասին որևէ կոնվենցիայով, որի մասնակից են և՛ ծագման և՛ պահանջն ստացած անդամ պետությունը, սահմանվում են վճիռների ճանաչման կամ կատարման պայմաններ, ապա գործում են այդ պայմանները: Ցանկացած պարագայում սույն Կանոնակարգի՝ ճանաչման և կատարման ընթացակարգին առնչվող դրույթները կարող են կիրառվել:

## **Հոդված 72**

Սույն Կանոնակարգը չի շոշափում այն համաձայնագրերի գործողությունը, որոնցով անդամ պետությունները, նախքան Բրյուսելի կոնվենցիայի 59-րդ հոդվածի համաձայն սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը, պարտավորվել են, մասնավորապես, կոնվենցիայի Պայմանավորվող պետություններում չճանաչել այն պատասխանողի նկատմամբ կայացված վճիռները, որի գտնվելու (բնակության) վայրը (domicile or habitual residence) երրորդ երկրում է, որտեղ կոնվենցիայի 4-րդ հոդվածով նախատեսված դեպքերում վճիռները կարող էին հիմնվել միայն կոնվենցիայի 3-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ նախատեսված իրավասության հիմքերի վրա:

## **ԳԼՈՒԽ VIII**

### **ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

## **Հոդված 73**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան հինգ տարի հետո Հանձնաժողովը պետք է սույն Կանոնակարգի կիրառման մասին զեկույց ներկայացնի Եվրոպական պառլամենտին, Խորհրդին ու Տնտեսական և

սոցիալական հարցերով կոմիտեին: Անհրաժեշտության դեպքում զեկույցին կից պետք է ներկայացվեն սույն Կանոնակարգի վերանայման առաջարկներ:

#### **Հոդված 74**

1. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ծանուցեն I-IV հավելվածներում զետեղված ցանկերում կատարվող փոփոխությունների մասին: Հանձնաժողովը, ըստ այդմ, փոփոխություններ է կատարում համապատասխան հավելվածներում:
2. Այն ձևաթղթերի փոփոխությունը կամ տեխնիկական ճշգրտումը, որոնց նմուշները զետեղված են V և VI հավելվածներում, կատարվում է հոդված 75«2»-ում նշված խորհրդակցական ընթացակարգով:

#### **Հոդված 75**

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Եթե հղում է արվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

#### **Հոդված 76**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2002 թվականի մարտի 1-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անդամ պետությունների համար և գործում է անմիջականորեն Եվրոպական համայնքի ստեղծման մասին Համաձայնագրի համաձայն:

Կատարված է Բրյուսելում, 2000 թվականի դեկտեմբերի 22-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ս. Պիեռե

## ՀԱՎԵԼՎԱԾ I

Կանոնակարգի հոդվածներ 3«2» և 4«2»-ում նշված իրավասության մասին կանոնները հետևյալն են.

- Բելգիայում՝ Քաղաքացիական օրենսգրքի (Code civil/Burgerlijk Wetboek) 15-րդ հոդվածը և Դատական օրենսգրքի (Code judiciaire/Gerechtelijk Wetboek) 638-րդ հոդվածը.
- Գերմանիայում՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (Zivilprozessordnung) 23-րդ հոդվածը.
- Հունաստանում՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (Κώδικας Πολιτικής Δικονομίας) 40-րդ հոդվածը.
- Ֆրանսիայում՝ Քաղաքացիական օրենսգրքի (Code civil) 14-րդ և 15-րդ հոդվածները.
- Իռլանդիայում՝ այն նորմերը, որոնք թույլ են տալիս իրավասությունը հիմնել վարույթ հարուցելու մասին փաստաթղթի վրա, որը պատասխանողին հանձնվել է Իռլանդիայում ժամանակավորապես գտնվելու ընթացքում.
- Իտալիայում՝ 1995 թվականի մայիսի 31-ին ընդունված թիվ 218 Ակտի 3-րդ և 4-րդ հոդվածները.
- Լյուքսեմբուրգում՝ Քաղաքացիական օրենսգրքի (Code civil) 14-րդ և 15-րդ հոդվածները.
- Նիդերլանդներում՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (Wetboek van Burgerlijke Rechtsvordering) հոդվածներ 126«3» և 127-ը.
- Ավստրիայում՝ Դատարանների իրավասության մասին ակտի (Jurisdiktionsnorm) 99-րդ հոդվածը.
- Պորտուգալիայում՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (Código de Processo Civil) հոդվածներ 65 և 65Ա-ն և Աշխատանքային դատավարության օրենսգրքի (Código de Processo de Trabalho) 11-րդ հոդվածը.
- Ֆինլանդիայում՝ Դատավարության օրենսգրքի (oikeudenkäymiskaari/rättegångsbalken) 10-րդ գլխի 1-ին բաժնի առաջին պարբերության երկրորդ, երրորդ և չորրորդ նախադասությունները.
- Շվեդիայում՝ Դատավարության օրենսգրքի (rättegångsbalken) 10-րդ գլխի 3-րդ բաժնի առաջին պարբերության առաջին նախադասությունը.
- Միացյալ Թագավորությունում՝ իրավասությունը որոշվում է հետևյալ հիմունքներով՝
  - ա) վարույթ հարուցելու մասին փաստաթղթի հիման վրա, որը պատասխանողին հանձնվել է Միացյալ Թագավորությունում ժամանակավորապես գտնվելու ընթացքում կամ
  - բ) Միացյալ Թագավորությունում պատասխանողին պատկանող գույքի առկայության դեպքում, կամ
  - գ) Միացյալ Թագավորությունում գտնվող գույքը հայցվորի կողմից իր տիրապետության տակ վերցնելու փաստի հիման վրա:



## ՀԱՎԵԼՎԱԾ II

39-րդ հոդվածում նշված դիմումը կարող է ներկայացվել հետևյալ դատարաններ կամ իրավասու մարմիններ՝

- Բելգիայում՝ "tribunal de première instance" կամ "rechtbank van eerste aanleg" կամ "erstinstanzliches Gericht".
- Գերմանիայում՝ "Landgericht"-ի պալատի նախագահող դատավորին.
- Հունաստանում՝ "Μονομελές Πρωτοδικείο".
- Իսպանիայում՝ "Juzgado de Primera Instancia".
- Ֆրանսիայում՝ "tribunal de grande instance"-ի նախագահող դատավորին.
- Իռլանդիայում՝ "the High Court".
- Իտալիայում՝ "Corte d'appello".
- Լյուքսեմբուրգում՝ "tribunal d'arrondissement"-ի նախագահող դատավորին.
- Նիդերլանդներում՝ "arrondissementsrechtbank"-ի նախագահող դատավորին.
- Ավստրիայում՝ "Bezirksgericht".
- Պորտուգալիայում՝ "Tribunal de Comarca".
- Ֆինլանդիայում՝ "käräjäoikeus/tingsrätt".
- Շվեդիայում՝ "Svea hovrätt".
- Միացյալ Թագավորությունում՝
  - ա) Անգլիայում և Ուելսում՝ "the High Court of Justice", իսկ ալիմենտ վճարելու մասին վճռի դեպքում՝ "the Magistrate's Court"՝ Պետական քարտուղարի ներկայացմամբ.
  - բ) Շոտլանդիայում՝ "the Court of Session", իսկ ալիմենտ վճարելու մասին վճռի պարագայում՝ "the Sheriff Court"՝ Պետական քարտուղարի ներկայացմամբ.
  - գ) Հյուսիսային Իռլանդիայում՝ "the High Court of Justice", իսկ ալիմենտ վճարելու մասին վճռի դեպքում՝ "the Magistrate's Court"՝ Պետական քարտուղարի ներկայացմամբ.
  - դ) Ջիբրալթարում՝ "the Supreme Court of Gibraltar", իսկ ալիմենտ վճարելու մասին վճռի դեպքում՝ "the Magistrates' Court"՝ "Attorney General of Gibraltar"-ի ներկայացմամբ:

### ՀԱՎԵԼՎԱԾ III

Հոդված 43«2»-ում նշված բողոքը կարող է ներկայացվել հետևյալ դատարաններ՝

- Բելգիայում՝

ա) պատասխանողի ներկայացրած բողոքի դեպքում՝ "tribunal de première instance" կամ "rechtbank van eerste aanleg" կամ "erstinstanzliches Gericht".

բ) հայցվորի ներկայացրած բողոքի դեպքում՝ "Cour d'appel" կամ "hof van beroep".

- Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում՝ "Oberlandesgericht".

- Հունաստանում՝ "Εφετείο".

- Իսպանիայում՝ "Audiencia Provincial".

- Ֆրանսիայում՝ "cour d'appel".

- Իռլանդիայում՝ "the High Court".

- Իտալիայում՝ "corte d'appello".

- Լյուքսեմբուրգում՝ "Cour supérieure de Justice", որը նման դեպքերում հանդես է գալիս որպես քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան.

- Նիդերլանդներում՝

ա) պատասխանողի դեպքում՝ "arrondissementsrechtbank".

բ) հայցվորի դեպքում՝ "gerechtshof".

- Ավստրիայում՝ "Bezirksgericht",

- Պորտուգալիայում՝ "Tribunal de Relação".

- Ֆինլանդիայում՝ "hovioikeus/hovrätt".

- Շվեդիայում՝ "Svea hovrätt".

- Միացյալ Թագավորությունում՝

ա) Անգլիայում և Ուելսում՝ "the High Court of Justice", իսկ ալիմենտ վճարելու մասին վճռի պարագայում՝ "Magistrate's Court".

բ) Շոտլանդիայում՝ "the Court of Session", իսկ ալիմենտ վճարելու մասին վճռի պարագայում՝ "the Sheriff Court".

գ) Հյուսիսային Իռլանդիայում՝ "the High Court of Justice", իսկ ալիմենտ վճարելու մասին վճռի դեպքում՝ "the Magistrate's Court".

դ) Ջիբրալթարում՝ "the Supreme Court of Gibraltar", իսկ ալիմենտ վճարելու մասին վճռի դեպքում՝ "the Magistrates' Court":

#### ՀԱՎԵԼՎԱԾ IV

44-րդ հոդվածի համաձայն ներկայացվող բողոքները հետևյալն են՝

- Բեղիայում, Հունաստանում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Լյուքսեմբուրգում և Նիդեռլանդներում՝ վճռաբեկ բողոք.
- Գերմանիայում՝ "Rechtsbeschwerde".
- Իռլանդիայում՝ իրավունքի հարցի վերաբերյալ բողոք Գերագույն դատարանին (Supreme Court).
- Ավստրիայում՝ "Revisionsrekurs".
- Պորտուգալիայում՝ իրավունքի հարցի վերաբերյալ բողոք.
- Ֆինլանդիայում՝ բողոք "korkein oikeus/högsta domstolen"-ին.
- Շվեդիայում՝ բողոք "Högsta domstolen"-ին.
- Միացյալ Թագավորությունում՝ a single further appeal on a point of law:

## ՀԱՎԵԼՎԱԾ V

Կանոնակարգի 54-րդ և 58-րդ հոդվածներում նշված՝ վճիռների և դատարանում կնքված հաշտության համաձայնությունների մասին պահանջվող տեղեկանքը (անզերեն)

1. Ծագման անդամ պետությունը

2. Տեղեկանքը տվող դատարանը կամ իրավասու մարմինը

2.1. Անվանումը

2.2. Հասցեն

2.3. Հեռախոսահամարը (ֆաքսը) (էլ. փոստը)

3. Վճիռը կայացրած (դատարանում կնքված հաշտության համաձայնությունը հաստատած) դատարանը<sup>11</sup>

3.1. Դատարանի տեսակը

3.2. Դատարանի գտնվելու վայրը

4. Վճիռը (դատարանում կնքված հաշտության համաձայնությունը)<sup>12</sup>

4.1. Օրը, ամիսը, տարին

4.2. Համարը

4.3. Վճռի (դատարանում կնքված հաշտության համաձայնության) կողմերը<sup>13</sup>

4.3.1. Հայցվորի(հայցվորների) անունը(ները)

4.3.2. Պատասխանողի(ների) անունը(ները)

4.3.3. Այլ կողմի(կողմերի) անունը(ները)՝ առկայության դեպքում

4.4. Վարույթի հարուցման հիմք հանդիսացող փաստաթղթի հանձնման օրը, եթե վճիռը կայացվել է կողմերից մեկի բացակայությամբ

4.5. Վճռի (դատարանում կնքված հաշտության համաձայնության) տեքստը՝ կցված սույն տեղեկանքին<sup>14</sup>

5. Կողմերի անունները, ում տրամադրվել է իրավաբանական օգնություն

Վճիռը (դատարանում կնքված հաշտության համաձայնությունը)<sup>15</sup> ենթակա է կատարման ծագման անդամ պետությունում (Կանոնակարգի 38-րդ և 58-րդ հոդվածներ) ընդդեմ՝

Անունը

Կատարված է ... , օրը, ամիսը, տարին ...

Ստորագրությունը և/կամ կնիքը

---

<sup>11</sup> Հանել անհրաժեշտության դեպքում

<sup>12</sup> Հանել անհրաժեշտության դեպքում

<sup>13</sup> Հանել անհրաժեշտության դեպքում

<sup>14</sup> Հանել անհրաժեշտության դեպքում

<sup>15</sup> Հանել անհրաժեշտության դեպքում

## ՀԱՎԵԼՎԱԾ VI

Կանոնակարգի հոդված 57«4»-ում նշված տեղեկանքը նույնական փաստաթղթերի մասին

(անգլերեն)

1. Ծագման անդամ պետությունը

2. Տեղեկանքը տվող իրավասու մարմինը

2.1. Անվանումը

2.2. Հասցեն

2.3. Հեռախոսահամարը (ֆաքսը) (էլ. փոստը)

3. Մարմինը, որը նույնականացրել է փաստաթուղթը

3.1. Մարմինը, որը ներգրավված է եղել նույնական փաստաթղթի կազմմանը (առկայության դեպքում)

3.1.1. Մարմնի անվանումը և գործունեության տեսակը

3.1.2. Մարմնի գտնվելու վայրը

3.2. Մարմինը, որը գրանցել է նույնական փաստաթուղթը (առկայության դեպքում)

3.2.1. Մարմնի տեսակը

3.2.2. Մարմնի գտնվելու վայրը

4. Նույնական փաստաթուղթը

4.1. Փաստաթղթի նկարագրությունը

4.2. Օրը, ամիսը, տարին,

4.2.1. երբ կազմվել է փաստաթուղթը,

4.2.2. եթե այլ է՝ երբ գրանցվել է փաստաթուղթը

4.3. Համարը

4.4. Փաստաթղթի կոդները

4.4.1. Պարտատիրոջ անունը

4.4.2. Պարտապանի անունը

5. Սույն տեղեկանքին կցված կատարման ենթակա պարտավորության տեքստը

Նույնական փաստաթուղթը ենթակա է կատարման ծագման անդամ պետությունում ընդդեմ պարտապանի (Կանոնակարգի հոդված 57«1»)

Կատարված է ... , օրը, ամիսը, տարին ....

Ստորագրությունը և (կամ) կնիքը ...